

ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎ

«ԹԻԽԻՍԻ ՄԵՏԱՔԵՆ ԾԱՆԱԿԱՐԻ»-Ը ԴԱՐՉԱՎ ԱՐԳՈՒՆԱԿԵՏ ԴԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԻՆԱՄԱԻ ՀԱՐԹԱԿ



Նոյեմբերի 28-29-ը Թբիլիսիում անցկացվեց «Թբիլիսի. Մետաքս Ծանապարհ» խորագրով համաժողովը, որին մասնակցեցին 34 երկրների պաշտոնական պատվիրակություններ, շուրջ 60 երկրների ավելի քան 1000 պատվիրակներ՝ ներկայացնելով 500 միջազգային ընկերություններ: Մասնակիցների թվում էր նաև Հայաստանի տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Վահան Մարտիրոսյանի գլխավորած պատվիրակությունը:

Վրաստանի վարչապետի հովանու ներքո անցկացված համաժողովը կազմակերպվել էր Վրաստանի արտաքին գործերի, էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարությունների նախաձեռնությամբ:

«Մետաքս Ծանապարհ» համաժողովում, որը կարելի էր առիթ էր Ասիայի և Եվրոպայի միջև տնտեսական, քաղաքական և մշակութային կապերի խորացման համար, քննարկեցին այնպիսի ար-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՄՊԱՆ ՈՒԲԵՆ ՍԱՊՈՅԱՆԸ ՀԱՎԱՏԱՐՄԱԳԵՐԸ ՀԱՆՁՆԵՑ ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՐ ԳԻՐԳԻ ՍԱՐԳՎԵԼԱՇՎԻԼՈՒՆ

Նոյեմբերի 29-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին ընդունեց Վրաստանում Հայաստանի նորանշանակ դեսպան Ռուբեն Սաղոյանի հավատարմագրերը:

Հավատարմագրերի հանձնմանը հաջորդած առանձնազրույցում, Վրաստանի նախագահը շնորհավորեց դեսպանին պաշտոնն ստանձնելու առիթով՝ նրան հաջողություն մաղթելով և հույս հայտնելով, որ Ռուբեն Սաղոյանն իր ակտիվ գործունեությամբ նոր էջ կբացի վրաց-հայկական հարաբերություններում:

Վրաստանի նախագահը նաև իր շնորհավորանքները փոխանցեց Հայաստանին Հայաստան-Եվրամիություն Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի ստորագրման կապակցությամբ:

Գիորգի Մարգվելաշվիլին իր խոսքում գոհունակությամբ ընդգծեց, որ երկու երկրների միջև գոյություն ունեն ակտիվ քաղաքական երկխոսություն, բարձր մակարդակի ինտենսիվ շփումներ և փոխայցելություններ: Գիորգի Մարգվելաշվիլին և Ռուբեն Սաղոյանը համակարծիք էին, որ վերըն-



թաց զարգացող վրաց-հայկական հարաբերությունները համապատասխանում են երկու ժողովուրդների բազմադարյա բարեկամության ոգուն: Կողմերը քննարկեցին հարեւան պետությունների միջև առկա բարեկամական հարաբերությունների (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ԱՐԱԳԱՑՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՔՆՆԱՐԿՎՈՒՄ Է ԿԱՌՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՕՐԻՆԱՓԱԹԵԹԸ

Նոյեմբերի 28-ին Վրաստանի խորհրդարանը ձեռնամուխ եղավ երկրի կառավարության կառուցվածքային վերակառուցման օրինանախագծի փաթեթի քննարկմանը: Փոփոխություններն իրականացվելու են 11 օրենքներում, և, ինչպես նշվեց խորհրդարանի բյուրոյի նիստում, փաթեթը ներառում է շուրջ 1000 էջ:

Նշենք, որ գործադիր իշխանության կառուցվածքային վերակառուցման օրինափաթեթը, կառավարության պահանջով, խորհրդարանը քննարկելու է արագացված կարգով: Խորհրդարանի բյուրոն հաշվի առավ այդ պահանջը, թեպետ, ինչպես հայտարարեց խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն, խորհրդարանը, բոլոր դեպքերում, չի հասցնի խորհրդարանական շաբաթվա ընթացքում քննարկել և երեք ընթերցումներով ընդունել վե-

րոնշյալ օրինանախագիծը: Վրաստանի կառավարության խորհրդարանական քարտուղար Շալվա Թադոմաձեի խոսքով, օրենսդրական փոփոխությունների ընդունումը կապված է կառավարությանը վստահության քվեի հանձնման, ինչպես նաև բյուջետային դրույթների փոփոխության հետ, և հենց այդ հանգամանքներով է թելադրված սեղմ ժամկետներում վերոնշյալ օրինանախագծի ընդունման անհրաժեշտությունը:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

ՍՏՈՐԱԳՐՎԵՅ ՀԱՅԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՏԱՊՈՓԱԿ ԵՎ ԸՆԴԱՅՆՎԱԾ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՁԱՅՆԱԳԻՐ

Նոյեմբերի 24-ին Բրյուսելում, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի և Եվրախորհրդի նախագահ Դոնալդ Տուսկի ներկայությամբ, ստորագրվեց Հայաստանի և Եվրամիության միջև Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր: Այն ստորագրեցին Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը և ԵՄ արտաքին քաղաքականության ու



անվտանգության հարցերով բարձր ներկայացուցիչ Ֆեդերիկա Մոգերինին:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ՏԱՐԵԼԻՑ

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ը՝ ՍՊԻՏԱԿԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԶՈՐՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐ

Դեկտեմբերի 7-ը Սպիտակի երկրաշարժի տարելիցի օրն է: 29 տարի առաջ, Հայաստանի հյուսիսային հատվածը ցնցվեց ահեղ ու կործանարար երկրաշարժից: Այդ օրը, ժամը 11 անց 41 րոպեին, ավերվեցին Հայաստանի Գյումրի (նախկին Լեհիմական), Վանաձոր (նախկին Կիրովական), Սպիտակ, Ստեփանավան քաղաքները, կործանվեցին հարյուրավոր գյուղեր, զոհվեցին ու խեղդանդամ դարձան հազարավոր մարդիկ, քանդվեցին ու ավերվեցին տասնյակ գործարաններ ու ֆաբրիկաներ: Զոհվեց 25 հազար մարդ, շուրջ կես միլիոն մարդ մնաց անօթեան: Կործանվեց երկրի բնակ-ֆոնդի 17 տոկոսը:



Գիան, գրեթե ողջ Եվրոպան ու Ասիան, մի մարդու մահու ռոքի կանգնեցին, օգնության ձեռք մեկնեցին: Առավել օգնությունը հասցրեց Հայկական սփյուռքը:

...Բայց աշխարհը լուռ ու անօգնական չթողեց հայ ժողովրդին: Վրաստանը, Ռուսաստանը, Ֆրանսիան, ԱՄՆ-ը, Կանադան, Ճապոն-

Այդ ահասարսուռ օրից անցել է 29 տարի: Կառուցվել ու վերակառուցվել են հազարավոր տներ, ժամանակավոր կացարաններից ազատվել են մարդիկ (իհարկե՛ դեռևս ոչ բոլորը), սպիացել, բայց չեն մոռացվել վերքերը, վիշտն ու ցավը ժամանակ առ ժամանակ տանջում է մարդկանց:

ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆ

ԲԱԹՈՒՄԻ ԶԻՆԿԱՍՏՂԱՆԻ ՀՅՈՒՐԱՆՈՑԻ ՀՐԴԵՂԻ ԶՈՂ ԴԱՐՉԱՎ 11 ՄԱՐԴ

ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՐՅԻՑ

Նոյեմբերի 24-ին, Բաթումի «Լեո Գրանդ» հինգաստղանի հյուրանոցում բռնկված հրդեհի արդյունքում, զոհվել է 11 մարդ (10-ը՝ Վրաստանի քաղաքացիներ են, 1-ը՝ Իրանի), իսկ 21-ը՝ վիրավորվել են՝ ստանալով տարբեր աստիճանի այրվածքներ: Տուժվածների թվում 3-ը՝ հրշեջներ են, 5-ը՝ Թուրքիայի, իսկ 1-ը՝ Իսրայելի քաղաքացի:

Վրաստանի կառավարությունը նոյեմբերի 27-ը սգո օր էր հայտարարել ի հիշատակ նոյեմբերի 24-ին Բաթումի «Լեո Գրանդ» հինգաստղանի հյուրանոցում տեղի ունեցած հրդեհի 11 զոհերի:

Վրաստանի կառավարությունը նոյեմբերի 27-ը սգո օր էր հայտարարել ի հիշատակ նոյեմբերի 24-ին Բաթումի «Լեո Գրանդ» հինգաստղանի հյուրանոցում տեղի ունեցած հրդեհի կապակցությամբ, որը տասնյակ անմեղ զոհերի և վիրավորների պատճառ դարձավ, Վրաստանի ղեկավարներին իրենց ցավակցությունն են հայտնել աշխարհի շատ երկրների ղեկավար-

ներ: Տեղի ունեցածի կապակցությամբ, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը նոյեմբերի 27-ին ցավակցական հեռագիր է հղել Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլուն: Հեռագրում Սերժ Սարգսյանը ցավակցություն է հայտնել Գիորգի Մարգվելաշվիլուն, Վրաստանի բարեկամ ժողովրդին և զոհվածների հարազատներին ու մերձավորներին՝ մաղթելով հոգու արիություն ու տոկունություն, իսկ վիրավորներին՝ շուտափույթ ապաքինում:

ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎ

«ԹԲԻԼԻՍԻ. ՄԵՏԱՔՍԵ ՃԱՆԱՊԱՐՀ»-Ը ԴԱՐՁԱՎ ԱՐԳՅՈՒՆԱՎԵՏ ԴԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻԱՆԱԽ ՀԱՐԹԱՎ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

դիական հարցեր, ինչպիսիք էին առեւտրի զարգացումը, թվային հաղորդակցությունը, տրանսպորտային ենթակառուցվածքները, էներգետիկայի ոլորտում միջպետական կարողություններն ու երկրների ներդրումային ներուժը:

Համաժողովին ներկայացվեց բիզնեսի զարգացման ուղղությամբ իրականացվող վրացական փորձը:

Համաժողովը բացեց Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին:

- «Մետաքսե մեծ ճանապարհ»-ի վերածնունդը, որը 2017-ի նախագահի կողմից ներկայացվել է «Գոտի եւ ճանապարհ» անվան ներքո, հիմնված է հինգ հիմնական սկզբունքների վրա՝ խաղաղություն, բարեկեցություն, համագործակցելու պատրաստակամություն, ինովացիաների եւ քաղաքակրթությունների կապ: Այն ակտիվ երկխոսություն է պահանջում հանրային ու մասնավոր հատվածում, եւ մենք հուսով ենք, որ այս խորհրդաժողովը մեզ լավ հնարավորություն կտա դրա համար: Ներածական իր խոսքում ասաց Գիորգի Կվիրիկաշվիլին եւ հավելեց.

միջ ներկայացվել է «Գոտի եւ ճանապարհ» անվան ներքո, հիմնված է հինգ հիմնական սկզբունքների վրա՝ խաղաղություն, բարեկեցություն, համագործակցելու պատրաստակամություն, ինովացիաների եւ քաղաքակրթությունների կապ: Այն ակտիվ երկխոսություն է պահանջում հանրային ու մասնավոր հատվածում, եւ մենք հուսով ենք, որ այս խորհրդաժողովը մեզ լավ հնարավորություն կտա դրա համար. Ներածական իր խոսքում ասաց Գիորգի Կվիրիկաշվիլին եւ հավելեց.


- Մեզ համար հսկայական պատիվ է մնան ներկայացուցչական պատվիրակություններ ընդունել «Մետաքսի ճանապարհ»-ի թբիլիսյան համաժողովում: Համաժողովում ելույթով հանդես եկավ Հայաստանի տրանսպորտի, կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի առաջին տեղակալ Գագիկ Գրիգորյանը:

Լեւոնյանը շնորհակալություններ արտահայտեց Վրաստանի վարչապետին եւ նրա կաբինետին:

Համաժողովում ելույթով հանդես եկավ Հայաստանի տրանսպորտի, կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի առաջին տեղակալ Գագիկ Գրիգորյանը:

Լեւոնյանը, որ «Թբիլիսի. Մետաքսե ճանապարհ» համաժողովն առաջին անգամ կազմակերպվել էր 2015 թվականին, եւ միջոցառմանը մասնակցել էր 34 երկիր:

Հաշվի առնելով միջոցառման կարեւորությունն ու ծավալը՝ «Մետաքսի ճանապարհ»-ը տեղի է ունենում երկու տարին մեկ:



ԵԳԻՊՏՈՍ

ՍԱՐՍԱՓԵԼԻ ԱՅԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆ ՍԻԱՅ ԹԵՐԱՎԿՈՂՈՒՄ

Նոյեմբերի 25-ին Եգիպտոսում, Սինայ թերակղզու հյուսիսում տեղի ունեցած ահաբեկչության հետեւանքով զոհերի թիվը հասել է 305-ի, որոնցից 27-ը երեխաներ են: Ահաբեկչության հետեւանքով, տուժել է 128 մարդ: Եգիպտոսի գլխավոր դատախազությունը հայտարարել է, որ Սինայ թերակղզու հյուսիսային շրջանում էր-Ռուդա մզկիթի վրա հարձակված ահաբեկիչները պահել են «Իսլամական պետություն» ահաբեկչական խմբավորման դրոշը:

Եգիպտոսում խոշորագույն ահաբեկչության հետեւանքով մահացածների հիշատակին հուշարձան կկառուցվի, զոհվածների ընտանիքներին կհատկացվի 11 հազարական դոլար՝ որպես նյութական փոխհատուցում: Հուշարձան կանգնեցնելու նախաձեռնությունը Եգիպտոսի նախագահ Աբդել Ֆաթթահ ալ-Սիսիինն է:

ԻՄՊԱՆԻԱ

ՊՈՒԶԳԵՍՈՆԸ ՆՇԵԼ Ե ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ԴԱՅՄԱՆԸ

Կատալոնիայի կառավարության նախկին նախագահ Կառլես Պուչդեմոնը, որի արտահանմանը Բեյզիայից ձգտում է հասնել իսպանական դատարանը, պատրաստվում է վերադառնալ Իսպանիա, եթե հարթանակ տանի ինքնավար հանրակցության՝ դեկտեմբերի 21-ին նշանակված խորհրդարանական ընտրություններում:

Պուչդեմոնի թեկնածությունն ընտրություններում առաջադրվել է «Սիասին» հանուն Կատալոնիայի» դաշինքի ցուցակից:

- Եթե դուք ցանկանում եք, որ ես լինեմ խորհրդարանում, ես այնտեղ կլինեմ եւ պաշտոն կգրադեցնեմ,- հայտարարել է Պուչդեմոնը տեսաուղերձում, որը զետեղված է սոցցանցերում:

Իսպանիայի կառավարությունը հոկտեմբերի վերջին ինքնավար հանրակցությունում սահմանել է ուղղակի կառավարում, հեռացրել՝ տարածաշրջանի ողջ կառավարությանը, արձակել խորհրդարանը եւ հայտարարել է դեկտեմբերի 21-ին վաղաժամկետ ընտրություններ անցկացնելու մասին:

ՀՅՈՒՄԻԱՍՅՈՒՆ ԿՈՐԵԱ ԱՐՁԱՎԿԵՑ

ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ ՀՐԹԻՈՒ

Նոյեմբերի 28-ին Հյուսիսային Կորեան իրականացրեց հերթական, այս անգամ միջմայրցամաքային հրթիռի արձակումը: Հրթիռը, անցնելով ավելի քան 200 կիլոմետր, ընկել է ճապոնական ծովը: Ինչպես նշել են ԱՄՆ պաշտպանության նախարարությունում, արձակված հրթիռը հասել է Հյուսիսային Կորեայի համար ռեկորդային բարձրության:

Նոյեմբերի 30-ին ՄԱԿ-ի ԱՆՎՍՏԱՆՈՒՄՅԱՆ խորհուրդը այդ կապակցությամբ հավաքվել է արտակարգ նիստի:

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ

ՆԵՐՎԱՅԱՑՎԵԼ Ե BREXIT-Ի ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐԸ

Մեծ Բրիտանիան, Եվրամիության կազմից իր դուրս գալու (Brexit) բանակցությունների շրջանակներում, հանրակցության այնպիսի գումար է առաջարկել, որը համապատասխանում է Բրյուսելի պահանջներին:

Նշենք, որ Բրյուսելը հույս ունի Լոնդոնից ստանալ շուրջ 52 մլրդ դոլար:

Իրենց հերթին, բրիտանական ՉԼՍ-ները վերջին շաբաթվա ընթացքում մի քանի գումարներ են հնչեցրել՝ 45 մլրդ եվրոյից մինչեւ 55 մլրդ եվրոյի միջակայքում, բայց այդ թվերից ոչ մեկը կողմերից ոչ մեկի պաշտոնական հաստատումը չի ստացել:

ՎՐԱՍԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՄՊԱՆ ՌՈՒԲԵՆ ՍԱՊՈՅԱՆԸ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԵՐԸ ՀԱՆՁՆԵՑ ՎՐԱՍԱՆԻ ՆԱԽԱԳԱՅ ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼՈՒՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Եւ համագործակցության առաջիկա ծրագրերը:

Հանդիպմանը կողմերը անդրադարձան նաեւ ընթացիկ տարվա դեկտեմբերին ծրագրված Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի՝ Վրաստան կատարելիք այցին:

Վրաստանի նախագահին նորանշակված դեսպանի հավատարմագրերի հանձնմանը ներկա էին Վրաստանի նախագահի աշխատակազմի ղեկավար Գիորգի Աբաշիձվիլին, Վրաստանի արտաքին գործերի փոխնախարար Խաթունա Թոթլաձեն, նախագահի խորհրդական Թենգիզ Փխալաձեն, Հայաստանի արտաքին գործերի նախարարության խորհրդական Գագիկ Հայրապետյանը, Վրաստանում Հայաստանի դեսպանության առաջին քարտուղար Արթուր Սարգսյանը, Վրաստանում Հայաստանի դեսպանության հյուպատոս Էլինա Սկրտչյանը:

Գագիկ աշխատակազմի ղեկավար Գիորգի Աբաշիձվիլին, Վրաստանի արտաքին գործերի փոխնախարար Խաթունա Թոթլաձեն, նախագահի խորհրդական Թենգիզ Փխալաձեն, Հայաստանի արտաքին գործերի նախարարության խորհրդական Գագիկ Հայրապետյանը, Վրաստանում Հայաստանի դեսպանության առաջին քարտուղար Արթուր Սարգսյանը, Վրաստանում Հայաստանի դեսպանության հյուպատոս Էլինա Սկրտչյանը:



Լուսանկարները՝ Լեյա Բլազոնրավոլայի

ՕՐԱՎԱՐԳՈՒՄ ԵՐԿԿՈՐՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՅՄԱՆ ՀԱՐՅԵՐՆ ԷԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՐԱՄԿՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՐԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵՆՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ ԹԲԻԼԻՍՈՒՄ



Թբիլիսիում անցկացված «Մետաքսե ճանապարհ» համաժողովի աշխատանքին մասնակցելու համար, Վրաստանի մայրաքաղաքում էր գտնվում Հայաստանի տրանսպորտի, կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Վահան Մարտիրոսյանի գլխավորած պատվիրակությունը:

Մարտիրոսյանի հետ:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին տրանսպորտի, կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում երկկողմ համագործակցությանը, ինչպես նաեւ տարածաշրջանային տրանսպորտային հաղորդակցությանն առնչվող հարցեր:

Նույն օրը կայացավ նաեւ Վրաստանի տարածքային զարգացման եւ ենթակառուցվածքների միջազգային կապերի Զուրաբ Ավալիձեի հանդիպումը Հայաստանի տրանսպորտի, կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Վահան Մարտիրոսյանի հետ:

Հանդիպմանը քննարկվել են ճանապարհաշինական մի շարք ծրագրեր, այդ թվում՝ Ստեփանծմիդա-Լարս ավտոճանապարհի մոտակայքում նախատեսվող թունելի կառուցման մի շարք մանրամասներ:

ՀԱՄԱԺՈՂՈՎ

ՎՐԱՍԱՆԻ ԿՐՈՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՄՏԻՃԱՆ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՇԻՆԳՏՈՆՈՒՄ

ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԾՄՈՒՄ ԷՐ ՆԱԵՎ ՎԻՐԱՅԱՅՈՅ ԹԵՄԻ ԱՌԱՅՆՈՐԳ ՎԱՉԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԻՐՁԱՄԱՆՅԱՆԸ

Նոյեմբերի 29-ին Վրաստանի կրոնական տարբեր ուղղությունների բարձրաստիճան հոգեւորականների պատվիրակությունը, որի կազմում էին Վրաստանի Ուղղափառ եկեղեցու, Հայ Առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմի, Վրաստանի Սահմեդական համայնքի եւ Անդրկովկասի լատինական օրենքի Կաթողիկե առաքելական եկեղեցու ներկայացուցիչները, գտնվում էր Վաշինգտոնում, որտեղ մասնակցեց ժողովրդավարության ազգային հիմնադրամի (NED) կողմից անցկացված՝ կրոնի դերը ժողովրդավարության մեջ եւ հակաառեւմտյան քարոզչության թեմային նվիրված համաժողովին:



Վրաստանի հոգեւորականների պատվիրակությունը ԱՄՆ-ում, ձախից երկրորդը Վաչագեն Եպիսկոպոս Միրզախանյանն է:

Համաժողովը բացեց NED-ի (ժողովրդավարության ազգային հիմնադրամ) նախագահ Կառլ Գերշմանը:

Համաժողովում Վրաստանի Պատրիարքության Սուրբ Սինոդի ներկայացուցիչները հոգեւորականները, հավաստեցին, որ եկեղեցին աջակցում է երկրի եվրատլանտյան ինտեգրմանը եւ, տեխնոլոգիապես զարգացած արեւմտյան երկրների առկայության դեպքում, Վրաստանում չպետք է ուժեղանա ռուսական քարոզչությունը:

Ամերիկյան այն երկիրն է, որը մեզ չի դավաճանել, իսկ մեր ազատության ձգտումների համար մի քանի տարի է, ինչ Ռուսաստանը բացահայտ պատերազմում է: Մեզ համար կարեւոր է Ամերիկայի աջակցությունը,- այս մասին հայտարարեց Բողբեի թեմի Եպիսկոպոս Իսկոբերը:

Պատվիրակության անդամ, Վիրահայոց թեմի առաջնորդ Վաչագեն Եպիսկոպոս Միրզախանյանը հեռուստաընկերություններից մեկին տված հարցազրույցում հայտարարեց.

Չեռք բերեցի նոր ընկերներ, որոնց հետ փոխհարաբերությունը հաճելի է: Գոհ եմ համաժողովի աշխատանքներից, քանի որ առաջին անգամ կայացավ տարբեր հավատքի ներկայացուցիչների մասնակցությամբ մնան հանդիպում: Մենք զրուցեցինք հավատքի ազատության, ժողովրդավարության, բոլոր այն խնդիրներին, որոնք առկա են ամբողջ աշխարհում:

Այցի շրջանակներում, հոգեւոր անձինք մասնակցեցին նաեւ քաղաքացիական սեկտորի, ակադեմիական օղակների, պետական գերատեսչությունների ներկայացուցիչների հետ հանդիպումներին:

Նոյեմբերի 30-ին պատվիրակությունը վերադարձավ Թբիլիսի:

Նոյեմբերի 30-ին պատվիրակությունը վերադարձավ Թբիլիսի:

Շարաքից շարաք. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԳՈՐԾԱԴԻՐ

ԳԻՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՆՎԻԼԻ. «2017 ԹՎԱԿԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՑՈՒՑԱՆԻՇԸ ԼԱՎԱԳՈՒՅՆՆ Է ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ»


Նոյեմբերի 30-ին, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկիայի նախագահությամբ, անցկացվեց երկրի կառավարության հերթական նիստը:

Նիստում անդրադարձ կատարվեց օրերու թիվիստում անցկացված «Մետաքսե ճանապարհ» գազաթափողովին: Վարչապետի գնահատմամբ, այն կրկին անգամ ցուցադրեց այն քայլերը, որ Վրաստանը ձեռնարկել է տարանցիկության, լոջիստիկայի, արդյունաբերության եւ արտա-

հանման ներուժի զարգացման ուղղությամբ: - Բոլորն ընդգծեցին, որ սույն գազաթափողովը մեր երկրի վիթխարի հաջողությունն է: Բավական է նշել, որ դրան մասնակցեցին 34 պաշտոնական պատվիրակություններ, ավելի քան 60 երկրների հազարից ավելի պատվիրակ: Գա-

զաթափողովի շրջանակներում, ձեռնարկվել են 10 կարեւորագույն համաձայնագրեր, - հայտարարեց վարչապետը: Խոսելով տնտեսական բարեփոխման ուղղությամբ իրականացված քայլերի արդյունավետության մասին՝ վարչապետը նշեց, որ, 2017 թվականի հոկտեմբերի հաշվառմամբ, երկրում տնտեսական աճը կազմել է 5,7 տոկոս, ինչը լավագույնն է տարածաշրջանի մասշտաբով:

- Մեր պարտքն է այդ ուղղությամբ ստեղծել առավելագույն դիմամիկա եւ առաջընթաց: Համոզված են, որ թիվիստում անցկացված գազաթափողովի այն նախագծերը, որոնք ստորագրվեցին եւ ստորագրվում են, հաջորդ տարվա համար կստեղծեն առավել մեծ դիմամիկա եւ, ֆինանսական բոլոր ինստիտուտների կանխագծմամբ, հաջորդ տարի կունենանք ավելի բարձր ցուցանիշ, - հայտարարեց վարչապետը:



ՆԻՆՈ ԼՈՆՁԱՐԻԱՆ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆ

Վրաստանի խորհրդարանը, երկրորդ քննարկումից հետո, 96 կողմ եւ 58 դեմ ձայներով, Վրաստանի ժողովրդական պաշտպանի պաշտոնում ընտրեց Նինո Լոնջարիային:



Խորհրդարանի քննարկմանը ներկայացված էր երկու թեկնածու՝ Նինո Լոնջարիան եւ Գիորգի Փոփխաձեն: Վերջինիս օգտին քվեարկեց 20 պատգամավոր, դեմ՝ 27-ը: Նինո Լոնջարիան օմբուդսմենի պաշտոնում կաշխատի հինգ տարի: Նշենք, որ Նինո Լոնջարիայի թեկնածությունը ներկայացվել էր կառավարող կուսակցության կողմից:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՄԱՏԵՂ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԷՆ

Նոյեմբերի 28-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկիայի համդիպում ունեցավ Եվրոպայի վերակառուցման եւ զարգացման բանկի (EBRD) փոխնախագահ Ալան Պյուի հետ: Հանդիպմանը քննարկվեցին EBRD-ի ֆինանսական աջակցությամբ Վրաստանում իրականացված նախագծերի հարցը եւ առաջիկա համագործակցության հեռանկարները:



Հանդիպմանը վարչապետն ընդգծեց Վրաստանի եւ Եվրոպայի վերակառուցման եւ զարգացման բանկի արդյունավետ համագործակցությունը, որն առանձնակի զարգացում է ապրել վերջին չորս տարիների ընթացքում: Նշվեց, որ, Վրաստանի բնակչության մեկ շնչի հաշվով ցուցաբերած օգնության տեսանկյունից, EBRD-ը երկրում զբաղեցնում է առաջատարի դիրքեր եւ Վրաստանն ու EBRD-ն միմյանց հետ ինչպես համրային, այնպես էլ մասնավոր հատվածներում, կապ-

ված են համագործակցության ծանրաբեռնված օրակարգով: Հանդիպմանը անդրադարձ կատարվեց Վրաստանի նկատմամբ EBRD-ի ռազմավարությանը, նշվեց, որ այն լրիվությամբ համապատասխանում է տնտեսական աճին, կրթության եւ կառավարման ոլորտների բարեփոխմանն ուղղված քառամյա ծրագրին: Առանձնակի ուշադրություն հատկացվեց ինստիտուցիոնալ եւ կառուցվածքային բարեփոխումներին հարցում Վրաստանի ձեռքբերումներին,

ինչպես նաեւ միջազգային վարկանիշներում Վրաստանի առաջատար դիրքին: Վրաստանի վարչապետը EBRD-ին շնորհակալություն հայտնեց «Մետաքսե ճանապարհ» գազաթափողովի անցկացման գործում ցուցաբերած աջակցության համար:

ԱՁԱՏ ԱՌԵՎՏՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ՝ ԳԻՆԱՍՏԱՆԻ ՇԵՏ



2018 թվականի հունվարի 1-ից Վրաստանի եւ Չինաստանի միջեւ կգործի ազատ առեւտրի պայմանագրագր: Նման հայտարարությամբ հանդես եկավ Վրաստանի առաջին փոխվարչապետ, էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Դմիտրի Քուսնիշվիլին, Չինաստանի կոմերցիայի փոխնախարար Ցիեն Քուսնիցի հետ հանդիպումից հետո:

Հանդիպմանը, որն անցկացվեց թբիլիսյան «Մետաքսե ճանապարհ» գազաթափողովի շրջանակներում, երկու երկրների ներկայացուցիչները մտքեր փոխանակեցին վրաց-չինական առեւտրատնտեսական համագործակցության զլխավոր հարցերի եւ հեռանկարների մասին:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՍՏՐԱՄԲՈՒՐԳԻ ԴԱՏԱՐԱՆԸ ՈՐՈՇՈՒՄ ԸՆԴՈՒՆԵՑՎԱՆՈ ՄԵՐԱԲԵՇՎԻԼՈՒ ԳՈՐԾՈՎ

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատը որոշում կայացրեց Վրաստանի ՆԳ նախկին նախարար Վանո Մերաբիշվիլու գործով «Մերաբիշվիլին ընդդեմ Վրաստանի» որոշման մասին:

Մեծ պալատը ուժի մեջ թողեց ստորին դատարանի որոշումը, որ վրացական իշխանությունները խախտել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 18-րդ հոդվածը Մերաբիշվիլու նկատմամբ: Հիշեցնենք, որ 2016թ. հունիսին Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արդեն որոշում կայացրեց Մերաբիշվիլու գործի մեջ՝ գտնելով, որ դրա հետ կապված խախտվել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 18-րդ հոդվածը: Դա պայմանավորված է Մերաբիշվիլու բողոքով, որ նրան գաղտնի տարել են բանտից՝ հանդիպելու զլխավոր դատախազի հետ եւ նրա վրա ճնշում գործադրելու մեջ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը որոշումը կայացրեց հոգու Մերաբիշվիլու, սակայն Վրաստանի Արդարադատության նախարարությունը դրան չհամաձայնեց, ինչը 2016 թ. հոկտեմբերին բողոքարկվեց Մեծ պալատում: «Վրաստանի նախկին վարչապետի նախնական հիմնավոր-

ված կալանքն ավելի ուշ անհիմն կերպով օգտագործվել է որպես ճնշում գործադրելու միջոց»,- ասվում է դատարանի կայքէջում հրապարակված որոշման մեջ: Այս որոշմանը կողմ քվեարկել է 9 դատավոր, իսկ 8-ը՝ դեմ: Ներկա պահին, Մերաբիշվիլին բանտարկված է հինգ քրեական գործով. քաղաք թելավիում 2004թ.՝ պետության օգտին «Ակուրա» գինու գործարանի անօրինական առգրավում, Ներգրավվածություն 2006թ.՝ «Վրաստանի Միավորված բանկի» աշխատակից Սանդրո Գիրգվիլիանու սպանության մեջ, 2011թ. մայիսի 26-ին՝ ընդդիմության հանրահավաքի ցրում, ընտրողներին կաշառքի տրամադրում՝ 2012թ. խորհրդարանական ընտրություններից առաջ, 2005 թ.՝ Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Վալերի Գելաշվիլուն ծեծելու գործում, ինչպես նաեւ ընդդիմության հանրահավաքի ցրում եւ 2007թ. նոյեմբերի 7-ին՝ ավերումներ «Իմեդի» հեռուստաընկերությունում:

րեց, որ, հատուկ գործողության արդյունքում, զոհվածներից մեկը Ամենո Չատաեւն էր: Ծառայության տեղեկատվությամբ, նա ինքն իրեն պայթեցրել էր: Հիշեցնենք, որ Ամենո Չատաեւը ժամանակին ձերբակալվել էր վրաց իրավապահների կողմից, չնայած հետո ազատ էր արձակվել:

ԱՆԿՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՎԵՑ ՀԱԿԱԱՅԱԲԵԿՉԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Թբիլիսիի Բերի Գաբրիել Սալոսի փողոցում նոյեմբերի 22-ի լուսարագին անցկացվել էր հակահարեկչական հատուկ գործողություն:

Գրեթե 20 ժամ տևած գործողության արդյունքում, ձերբակալվել էր մեկ եւ սպանվել էր երեք ահաբեկիչ: Իրավապահների կողմից սպանվել էր 1 զինծառա-

յող, 4-ը՝ վիրավորվել: Դեկտեմբերի 1-ին Վրաստանի պետական անվտանգության ծառայության հակահարեկչական կենտրոնը հայտարարեց,

ԼԱՇԱ ԴԱՐՍԱԼԻԱՆ՝ ՊԵՏԱԽԱՄԱՐԻ ԱՈՒԱԶԻՆ ՏԵՂԱԿԱԼ

37-ամյա Լաշա Դարսալիան նշանակվել է Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերի պետ նախարարի առաջին տեղակալ: Նա այդ պաշտոնում փոխարինել է Պետրե Կանկավային:



Լ.Դարսալիան ունի թբիլիսիի Ի. Ջավախիշվիլու անվան պետական լսարանի եւ էքսեսի համալսարանի (Մեծ Բրիտանիա) մագիստրոսի աստիճան, վերջին տարիներին աշխատել է Վրաստանի ազգային անվտանգության խորհրդում, եղել է անվտանգության ու վերլուծության դեպարտամենտի պետ: Մինչ օրս երկրի տարբեր բուհերում նա վարում է «Քաղաքական գործընթացները կովկասում» դասընթացը:

ՄԱՐԻԽՈՒՄԱՆՅԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԱՊԱՔՐԵԱԿԱՆԱՑՎԵԼ Է

Սահմանադրական դատարանը բավարարեց «Գիրչի»-ի հայցը, որում քաղաքացի Գիվի Շանիձեն պահանջել է, մարիխուանայի կրկնակի օգտագործման դեպքում, ազատել քրեական պատասխանատվությունից: Սահմանադրական դատարանի որոշման համաձայն, Վրաստանում մարիխուանայի սպառումը ապաքրեականացվում է: Հայցը դատարանում ներկայացվել է 2016 թվականի մարտի 4-ին: Հիշեցնենք, որ, կապված մարիխուանայի օգտագործման հետ, Սահմանադրական դատարանում մի շարք դատական հայցեր են ներկայացվել, որոնց մեծ մասը բավարարվել է դատարանի կողմից:

ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈՒՆԱՆԱԿԱՆ ԿՈՒՐՍԸ (1 դեկտեմբերի)

Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի հետեւյալ կուրսը.

ՏԱՐԱԴՐԱՄ	ԱՌՔ	ՎԱՃԱՌՔ
ԱՄՆ ԴՈԼԱՐ	2.680	2.745
ԵՎՐՈ	3.170	3.298
ՌՈՒԲԼԻ	0.044	0.050
ԴՐԱՄ	0.0042	0.0061

Նոյեմբերի 24-ի համեմատ, դոլարի կուրսը նվազել է 0,015 լարիով:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՌԱՎԱՐՈՒՄ

ՆՈՐՈՆՏԻՐ ՍԱԿՐԵՐՈՒԼՈՆԵՐՆ ՈՒ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԵՆՆԱՄՈՒԽ ԵՂԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ

ԱՆԱԼԱՔԱԼՔԻ

Նոյեմբերի 24-ին, Ախալքալաքի մունիցիպալիտետի սակրեբուլոյի երկրորդ նիստում, որը վարում էր սակրեբուլոյի նախագահ Նաիրի Իրիցյանը, պատգամավորները, փակ եւ գաղտնի քվեարկությամբ, ընտրեցին հանձնաժողովների նախագահներ: Սակրեբուլոյում «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» խմբակցության նախագահ Ջուրո (Գայոզ) Լոմսաձեն ներկայացրեց իրենց կուսակցության կողմից առաջադրված թեկնածուներին:



սոցիալական հարցերի, մշակույթի, կրթության, սպորտի եւ երիտասարդական հարցերի հանձնաժողովի նախագահ՝ Սարգիս Մելիքյանը:

Ախալքալաքի նորընտիր քաղաքապետ Յուրիկ Ունանյանը մունիցիպալիտետի վարչությունում իրականացրեց կադրային փոփոխություններ: Առաջին փոխքաղաքապետի պաշտոնում վերանշանակվեց Շալվա Բալախանյանը, փոխքաղաքապետի պաշտոնում՝ Արմեն Մառաճոզյանը, որը մինչ այդ Սանգիտե-Ջավախեթիում Վրաստանի ժողովրդական պաշտպանի ներկայացուցիչն էր:

ՆԻՆՈՇՄԻՆԱՂ

Նինոծմինդայի մունիցիպալիտետի նորընտիր սակրեբուլոյի անդրանիկ նիստում, պատգամավորները, ժողովի նախագահի եւ տեղակալների ընտրության հետ միասին, ձեռնամուխ եղան սակրեբուլոյի հինգ հանձնաժողովների կազմավորմանն ու դրանց նախագահների ընտրությանը: Սակրեբուլոյի փոխնախագահի պաշտոնում պատգամավորները ընտրեցին Կոնստանտին Վարդանյանին:

Գաղտնի ընտրության արդյունքում, սակրեբուլոյի մանդատային, ընթացակարգային, իրավաբանական հարցերով եւ էթիկայի հանձնաժողովի նախագահ է ընտրվել Սամվել Իրիցյանը, գույքի կառավարման, բնական ռեսուրսների եւ ագրարային հարցերով հանձնաժողովի նախագահ՝ Մանվել Աբգարյանը, ֆինանսա-բյուջետային հանձնաժողովի նախագահ՝ Անդրանիկ Խաչատրյանը, տարածքային պլանավորման եւ ենթակառուցվածքի հանձնաժողովի նախագահ՝ Ռսկան Էլոյանը, սոցիալական հարցերով, մշակույթի, կրթության, սպորտի եւ երիտասարդության հարցերով հանձնաժողովի նախագահ՝ Սեդա Դարբինյանը:

Նինոծմինդայի քաղաքապետ Անի Սոսոյանի հրամանով, փոխքաղաքապետի պաշտոններում վերահաստատվել են Ալեքսանդր Միքելաձեն (առաջին փոխքաղաքապետ) եւ Արտավազ Տոնոյանը (փոխքաղաքապետ):



ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

PRIVE ՄՊԱՍԱՐԿՈՒՄ «ԱՐՏԱԴՐԻՐ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ» ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍԱՐ

Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայությունը կառավարական «ԱրտադրիՐ Վրաստանում» ծրագրի մասնակիցներին առաջարկում է առաջիկա վեց ամիսների ընթացքում անվճար օգտվել անձնական հարկային PRIVE խորհրդակցական սպասարկումից:

Այդ կապակցությամբ, նոյեմբերի 21-ին, ֆինանսների նախարարության խորհրդատվությունների դահլիճում, ֆինանսների առաջին փոխնախարար, եկամուտների ծառայության պետ Գիորգի Թաբուաշվիլին եւ եկամուտների ծառայության սպասարկումների ղեկավարտանների ներկայացուցիչները հանդիպում ունեցան «ԱրտադրիՐ Վրաստանում» ծրագրի մասնակիցների հետ: Հանդիպմանը ներկա էին Էլոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարության «ԱրտադրիՐ Վրաստանում» ՀԻԻԱ եւ գյուղատնտեսության նախագծերի կառավարման գործակալության ներկայացուցիչները:

Տարիներ շարունակ, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայությունը իր գերատեսչության դիրքորոշումը ներկայացնում է ոչ միայն որպես օրինակազանդության մակարդակի բարձրացումն ապահովող եւ իրավախախտումները բացահայտող մարմին, այլեւ բիզնես զարգացմանը աջակցող, երկրի էկոնոմիկայի զարգացմանը եւ, հետեւաբար, իրավախախտումների կանխման ուղղված ջանադրորեն գործող ինստիտուտ,- սկսնակ գործարարների հետ հանդիպմանը հայտարարեց Գիորգի Թաբուաշվիլին: Նրա խոսքով, եկամուտների ծառայությունն անընդմեջ աշխատակար-

գով ձեւավորում եւ նորացնում է բոլորի համար մատչելի, դյուրացված եւ արդյունավետ սպասարկումներ: Մշտապես բարելավվում է սպասարկման որակը:

Փոխադրողներին առաջարկում ենք խորհրդատվական սպասարկում բոլոր հնարավոր խորհրդատվական ակիբներով: Այդ թվում՝ ճկուն եւ արագ էլեկտրոնային սպասարկումները, շարժական սերվիս-կենտրոնների, այսպես կոչված RS CAR-ի, տեղանասային աշխատակիցների, հեռախոսային կենտրոնների միջոցով: Բոլոր այդ սպասարկումներն անվճար են եւ մատչելի բոլոր փոխադրողների համար: Իսկ այսօրվանից եկամուտների ծառայության հատուկ PRIVE սպասարկումից կարող են օգտվել սկսնակ գործարարները: Այս նոր նախաձեռնությունը կնպաստի եւ կխրախուսի Վրաստանում արտադրության հետագա զարգացումն ու առաջընթացը,- հայտարարեց Վրաստանի ֆինանսների առաջին փոխնախարար, եկամուտների ծառայության պետը:

Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության անձնական հարկային PRIVE խորհրդակցական սպասարկումը անհատական խորհրդատվական սպասարկում է հարկային եւ մաքսային հարցերով: Հետեւաբար, հարկային խորհրդակցանք արտադրություն-



ներին կօգնի բիզնես-գործարարության ճիշտ եւ արդյունավետ իրականացմանը: Մասնավորապես, հարկային խորհրդակցանք գործարարներին խորհրդատվություններ կմատուցի հարկային օրենսդրությամբ սահմանված պարտականությունների կատարման եւ օրենքով շնորհված իրավունքներից օգտվելու վերաբերյալ:

«ԱրտադրիՐ Վրաստանում» ծրագիրը պետական քաղաքականության բաղկացուցիչ մասն է, որը նախատեսում է երկրում գործարարության զարգացման աջակցություն, նոր արտադրությունների հիմնում եւ արտահանման ներուժի նշանակալի ավելացում:

Ֆինանսների նախարարության եկամուտների ծառայությունը ողջունում է նման նախաձեռնությունները եւ պատրաստ է պաշտպանել արտադրությանը կողմնորոշված ինդուստրիայի զարգացումը:

ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՆՑԱԿԵՏԵՐՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Ե ՄԱՔՍԱՆԵՆԳ ԱՊՐԱՆՔ

Մաքսային աշխատակիցները թմրանյութերի ապօրինի ներկրման փորձ են կանխել «Գուգուբի» եւ «Սադախլու ավտոճանապարհային» սահմանային անցակետերում: Հայաստանի քաղաքացիներ Ա.Ա.-ի եւ Ա.Ա.-ի մեքենաների խուզարկության ժամանակ, հայտնաբերվել է թմրանյութ, ընդհանուր՝ 12,8 գրամ քաշով: Գործի նյութերը, հետագա արձագանքման համար, փոխանցվել են ՆԳ

նախարարության համապատասխան ծառայությանը: Նոյեմբերի 20-ին, «Սադախլու ավտոճանապարհային» սահմանային անցակետում, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային աշխատակիցները, կասկածի հիման վրա, խուզարկել են Ռուսաստանի քաղաքացի Ա.Ա.-ի պայուսակը, որտեղ հայտնաբերել են չհռչակագրված ոսկե

զարդեր, ընդհանուր՝ 175,08 գրամ քաշով: Ապրանքի մաքսային արժեքը կազմում է 11 668,81 լարի: Գործող օրենսդրության համաձայն, իրավախախտում թույլ տված քաղաքացին տուգանվել է 11 668,81 լարիով: Նոյեմբերի 23-ին, «Կարմիր կանուրջ» սահմանային անցակետում, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային աշխատա-

կիցները, կասկածի հիման վրա, խուզարկել են Ադրբեջանի քաղաքացի Փ.Հ.-ին պատկանող ավտոմեքենան: Խուզարկության ժամանակ հայտնաբերվել է 184 չհռչակագրված բջջային հեռախոս, ապրանքի մաքսային արժեքը գնահատվել է 7 7822,92 լարի: Գործող օրենսդրության համաձայն, իրավախախտում թույլ տված քաղաքացին տուգանվել է նույնքան գումարով:

ՃԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Ե ՀԱՄԱԳՈՐԾԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԱՔՍԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ



Նոյեմբերի 28-ին Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության պետի տեղակալ Վախթանգ Լաշքարաձեն հանդիպում ունեցավ համաշխարհային մաքսային կազմակերպության առևտրի աջակցության եւ օրինահամապատասխանության տնօրինության ղեկավար Աննա Ինոհոսի հետ: Բարձրաստիճան հյուրը թբիլիսի էր ժամանել մասնակցելու «Մետաքսե ճանապարհ» գազաթաժողովին:

Հանդիպմանը կողմերը խոսեցին Վրաստանում էլեկտրոնային առևտրի, նաեւ մաքսային կատարման ու ավտոմատացված համակարգերի մասին: Քննարկեցին Վրաստանում Համաշխարհային մաքսային կազմակերպության հովանու ներքո իրականացվող նախագծերն ու ծրագրերը, այդ թվում՝ Համաշխարհային մաքսային կազմակերպության կողմից հավաստագրված փորձագետների, ՄԱԿ-ի Թմրանյութերի ու հանցագործության դեմ պայքարի գրասենյակի (UNODC) եւ Համաշխար-

հային մաքսային կազմակերպության (WCO) կոնտեներների վերահսկողության ծրագիրը, Համաշխարհային մաքսային կազմակերպության կողմից մշակված բեռների ընտրության համակարգը (WCO CTS), Համաշխարհային մաքսային կազմակերպության տարանցման նորացված ձեռնարկը, RILO (Regional Intelligence Liaison Office), մաքսային ընթացակարգերի ժամանակ չափումները (Time Release Study) եւ այլն: Աննա Ինոհոսը բարձր գնահատեց եկամուտների ծառայության եւ Համաշխարհային մաքսային կազմակերպության համագործակցությունը: Իր հերթին, Վախթանգ Լաշքարաձեն պատրաստակամություն հայտնեց շարունակել համագործակցությունը Համաշխարհային մաքսային կազմակերպության հետ եւ ընդգծեց Համաշխարհային մաքսային կազմակերպության կողմից մշակված հանձնարարականների գործնական ու արդյունավետ օգտա-

գործման նպատակով համագործակցության խորացման անհրաժեշտությունը:

Մինչ ֆինանսների նախարարության եկամուտների ծառայությունում կայացած երկկողմ հանդիպումը, Համաշխարհային մաքսային կազմակերպության առևտրի աջակցության եւ օրինահամապատասխանության տնօրինության ղեկավար Աննա Ինոհոսը ելույթ էր ունեցել «Մետաքսե ճանապարհ» գազաթաժողովի նստաշրջանում: Այն նվիրված էր էլեկտրոնային առևտրի հարցերին: Գազաթաժողովի պատվիրակները առևտրի զարգացման տեսանկյունից քննարկեցին էլեկտրոնային կոմերցիոն հնարավորությունները, նաեւ փոքր եւ միջին գործարարության զարգացման, էլեկտրոնային կոմերցիայի դրական կողմերը:

ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ